

4654

Gaffphydail

4700

On January 25, 1951.

891.99
9-13

Jan 25, 1951

907

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

1305.

5

891.99

9-13

у

2
б. а. ч. о.

1305
2034

ԳՐԱՑՄՈՒՆՔՆԵՐ



8961

426

ա ստուգի ս կ ո ւ թ ե զ

ՄԵԼԻՔՈՎ ԳԱՅՐԻԵԼԵՍԵ

— EDITION —

3279


Ճ Ո Ւ Ճ Ի

Տպադան Բ. Տէր-Մահմետանցի

1901

2024

ДЛЯ ГЛАВНОГО УЧИЛИЩА



Дозволено Цензурою. Тифлисъ, 5-го Октября 1900 г.



1823
45 48 41 §

драматургия-632 в. Соловьев
1001



2003




FIG. 6. MUSICAL INSTRUMENTS

FIG. 6. MUSICAL INSTRUMENTS

Յ Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

896/

Ոմանք կատեն թէ աշխարհի մէջ երկու կերպ ուսում ստացողներ կան. առաջինը եթէ երեխայի ծնողները ողջ են և իրանք էլ լաւ կարողութեան տէր՝ երեխային տալիս են ուսման և լաւ ուսում է ստանում. եթէ երեխան ժոյ է լինում, կորսում է ծնողաց աշխատութիւնը; Երկրորդ՝ եթէ երեխան որբ է լինում ամեն կողմով տեսակ-տեսակ փորձութիւնների մէջ գտնուելով փորձում է և եթէ Աստուած էլ քիչ կողմն է լինում տիրանում է լաւ ուսման; Ես այս 2 կերպի ոչ մէկին էլ տէրը չեմ. որովհետև թէպէտ իմ հայրս թէ շատ թէ քիչ կարողութեան տէր է եղել, բայց ես ոչ որբ եմ եղել և ոչ ծնողաց տէր. քանի որ իմ հայրս մեռել է իմ չորս տարեկան ժամանակս. այդ պատճառով դժբաղզութեան մէջ եմ եղել: Բայց կարելի է ասել, որ երեք տարի ուսման եմ գնացել, ին էլ տարին երեք ամիս ձմեռուայ ժամանակ, մնացեալ տարուայ 9 ամիսը պարապել եմ եզանց և լծի արանքումն. իսկ տարուայ 3 ամսուայ ուսումնարանս եղել է գիւղական մի հին գոմ, որի մի կողքն էլ քանդուած, իսկ վարժապետս էլ կոպիտ քահանայ, առաւօտեան սովորեցրած դասերս կէսօրին դաս տալու ժամանակ, քանոնը առնում էր ձեռը և հրաւիրում դասի: Մենք աշակերտներս քանոնը տեսներուն պէս, իսկոյն մոռանում էինք մեր սովորած դասերը և կորսում էր մեր այդ օրուան աշխատութիւնը, յետոյ վարժապետը սկսում էր սաստիկ ծեծել այնքան մինչև որ սկսում էր ձեռքներիս արիւնը վագել. միմիայն մենք բոլոր աշակերտներս ինչով էինք միսիթարուում որ վարժապետը բացակայ լինելուն պէս գոմի ախոռներում գողլուկանի¹⁾ էինք տալիս: Այս ուսման ձեւ չէր որ մենք տանջուում էինք անօգնական: Այս դրութեան մէջ ստացած ուսման վերաբերեալ ամենախո-

¹⁾ Գողլուկանին մի խաղ է որ մէկի աշքերը կապում են՝ իսկ միւսները փախչում են թագնուում:

նարհաբար խնդրում եմ բարի զգացմունքներ ունեցող ընթերցողաց և ազգասէր իշխան մարդկանց սխալներս ներել, որովհետև կամենում եմ մեր նախահօքից սկսեալ մինչև այսօր ականջով լսածներս և աշքով տեսած բարի զգացմունքներս գրի առնել: Օբինակի համար՝ Աստուած մարդուն ստեղծելուց յետոյ տուաւ չնորհք, իմաստութիւն և մինչև անդամ այդ հազուադիւտ ընծայիւ իւր սուրբ պատկերը չը խնայեց՝ ինչպէս հայրը իւր որդու խնամակալութեան ժամանակն ոչինչ չի խնայում. այնպէս այն օրինակն է կատարում, ինչպէս Աստուած իւր ստեղծած նախաստեղծների հետ էր վարում գրախտի փափկասիրութեան և այլ իւր Աստուածընծայ լի բարիքներովն, բայց գրանք չունենալով այն զգացմունքները իրանց սրտի մէջ, մինչև անդամ ստեղծողին խարել ու մեղադրել կամեցան՝ որից և աքսորանքի ենխարկուեցան զրկուելով գրախտի բոլոր չնորհալի Աստուածատուր բարիքներից, հաւասարուեցան դատաւորից դատուած աւազակի՝ ինչպէս մեղադրուելով քշւում են աքսորանքի: Կըճատել զրութեանս մէջ երկմիտ չի մնայ ընթերցողը, թէ ինչով էին ուղում Աստուծուն մեղադրելու, քանի որ ընտրուած դատաւոր դեռ ևս չը կար՝ այն նպատակով որ օձից խորամանկ բարիք չէր ստեղծել մեզ համար, քանի որ նախաստեղծները առաջին անդամն էր որ օձից խարսուցան և դորանով իրանց զգացմունքները ուզդիլու համար Տիրոջ հարցին այսպէս պատասխան տուին. օձի արած շարութիւնը դէպի մարդկութեան առմը՝ արդիօք ունեցան այդ մարդիկը իրանց մէջ բարի զգացմունքներ թէ ոչ—երբէք՝ փօփանակ մեղան չլու իրանց շարգ պացմունքներից, Արարոջն էին ուղում մեղադրել, երեսկայիցէք դուք ընթերցողներ՝ արդիօք ձեր սրտի զգացմունքների մէջ հաճոյ եղան Տէրին թէ ոչ—երբէք լոկ խօսքերով հաճոյանալու, միայն զրկուեցան դրախտի բարիքներից: Առհասարակ մարդիկ այսուհետև օձի զգացմունքներ ունե-

ցողից թող խոյս տան, իրանց կեամքը պահպանելու, շա-
 րից ազատուելու նպատակով։ Որոնք չունին բարի զգաց-
 մունքներ դէպի մարդասիրութիւնը, ընկերասիրութիւնը,
 եղբայրսիրութիւնը կամ ազգասիրութիւնը, կամ թէ բարի
 խղճմտանքը, մարդկանց մէջ լինում են զանազան զգաց-
 մունքներ ունեցողներ, զօր օր. բնական, ուսումնական և
 արհեստական։ Բնական զգացմունքներ ունեցողներն ի
 ծննդէ իրանց մէջ ունենում են դէպի բարի նպատակները,
 դէպի բարի զգացմունքները, դէպի ուղղութիւնը՝ քանի որ
 նրանց տուածէ բնութիւնից՝ չարն նրանց շեղեւ անկարող
 է, այդպիսիներն օձի խորամանկութիւնից ազատ են և հե-
 ռու, զրանք Աստուածանից կը սիրուն և ոչ թէ կ'աքսո-
 րուեն։ Ուսումնական զգացմունքներ ունեցողներ ևս կան
 որոնք միայն, ուսման չնորհով են կարողանում չար ու
 բարի զգացմունքներ ունեցողներին միմեանցից որոշել այ-
 սինքն բարի մարդկանց չար խրախուսանք շնու տալ, այդ
 էլ ուսումնական զգացմունքներն է, քանի որ Աստուած չար
 չի ստեղծել մարդկային նախահօրն, իսկ արհեստական
 զգացմունքներ ունեցողներին միայն կարելի է հեշտութեամբ
 որոշել. այդպիսիները կարելի է հաւասարացնել մեր շա-
 տախօս աշուղներին, որոնք իւրեանց զգացմունքներին մի-
 այն շահերի նման են արտայայտում, իրանց շահերի կամ
 Մամոնայի համար, օրինակ վերցնենք մեր հոգևորական-
 ներին ուսեալին կամ թէ տգէտին որոնք իրանց յանձնուած
 պաշտօններին արհեստական զգացմունքներով են արտա-
 յայտում։ Ժողովուրդից պատիւ ստանալու նպատակով մի-
 այն ծէսերն են կատարում, ինչպէս մեր Վեհափառ Հայ-
 րիկն քանիսներին իւր սուրբ բերանովն ասաց թէ. «Եղ-
 բայրներ, քահանաներ, ունիք դուք այլ ևս մի ուրիշ ար-
 հեստ դէպի ձեր սրտի բարի զգացմունքները թէ ոչ», բայց
 պատասխան չի ստացաւ պատճառն որ զրանք միայն ար-
 հեստական զգացմունքներով են ժողովուրդի մէջ աչքի ընկ-

նում, զանազան համսպամանքների միջոցաւ, այսինքն կը-
նունքի, հարսանիքի, ննջեցեալքի, տօն օրհնենքի և գերեզ-
ման օրհնենքի պատճառներով, սիրում են ժողովուրդից:
Այդպիսի մարդիկներն արհեստական զգացմունքներն ունին
միայն, որոնց բնութեան զգացմունքներն չեն ստիպում որ
մարդկային տոհմին խրախուսեն, քաղաքում, գիւղում, հրա-
պարակում կամ թէ եկիղեցում ու հասարակ տներում պի-
տի այն զգացմունքներն խրախուսեն, որոնք վերաբերում
են դէպի մարդասիրութիւնն, ազգասիրութիւնն, ընկերա-
սիրութիւնն և եզրայրասիրութիւնն կամ կրօնն: Այդպիսի-
ներին կարող եմ հաւասարացնել միայն դալայշու կլեկած
պղինձին որ քանի նոր է իւր մէջ նորութիւն, ջերմակու-
թիւն ունի. առերես քիչ հնանալուց յետոյ փըխարում է
մինչև անզամ գոյութիւնից ընկնում: Մենք մեղաւորներս
Տէրի շնորհած իմաստութեամբ պիտի աշքի առաջ ունե-
նանք այդպիսի արհեստական զգացմունքներ ունեցող մա-
մոնասէրներից չի խարուենք այլ խոյս տանք որ վնաս չի
ստանանք: Այդպիսի դէպքերում ևս դէպի Աստուած չար
բերան ենք բացանում թէ նրան հաւանականն էր բայց
շատ սխալուած ենք այդպիսի դէպքերում քանի որ վերին
տողերում լիշած եմ և նմանեցրած թէ ինչպէս հայրն իւր
որդուն նոյնպէս էլ Աստուած բոլորին. քանի որ բոլորե-
ցունց քարիք տուողն միշտ ինքն է ինչով պիտի նրան մե-
ղադրենք. նա այնքան սիրեց մեր նախահօրն որ օգնական
եւային ստեղծեց. նոյն օրինակն էլ մեզ համար թողեց.
թող մարդիկ Տիրոջ կարգադրութեան առաջ պարիսպ չի
ըլլան չար նպատակով՝ քանի որ անձամբ ականատես է բո-
լորին որ նա է ստեղծողն, ապրեցնողն և կերակրողն կամ
մեռեների յարութիւն տուողն մեղաւորների ու արդարների
դատողն: Մենք մեղաւորներս միշտ պիտի որ վառք տանք
Աստուծուն այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Հէ գրաւեր պահապարա ովութ
յիսով ովութ զինու խրաբութ

Արիք կապել եմ կարմիր դրօշակ,
Չոքս կողմնըն են ծաղկունքներով փակ,
Գիրք առնելու չի խնայէք ըստակ,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Ապաշխարութեան դնենք մեր անձը,
Սրտերիցս հանենք շար նախանձը,
Տի սիրենք հոգուց առաւել դանձը,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Երանի արդար հոգւով զգուշւին,
Պահելով մեծ պատուիրանք Տէր Քրիստոսին,
Մենք էլ թափ տանք մեզնից մեղաց փոշին,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Տիրելիք սիրեցէք իրար կատէ,
Ազքայութիւն լի արդարոց զաս է,
Տէրը մեզնով բազմանալ կ'սպասէ,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Այժմ մեղաւոք ենք ու խայտառակ,
Ունինք արդարանալու նպատակ,
Թէ դարձ գանք նման որդոյն անառակ,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Ուղիղ սրտով ով Աստուծուն կանչէ,
Եթէ դարձ գայ մեղքերէն կ'ամաշէ,

Գիտէք արդարանալը դժուար չէ,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Գիտէք ի՞նչ է կտակի նպատակը,
Եթէ ուրանանք շար նպատակը,
Մենք կառնենք արքայութեան փափագը,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Գիտէք ո՞վ էր այն մանուկ ծնեալը,
Որ եկաւ կուզէն դժոխք աւրելը,
Վերջ ի վերջոյ ունային դալը,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Ի՞նչու գնաց ծնաւ սուրբ այրի մէջ,
Եւան թաղուած էր ¹⁾ այն սուրբ այրի մէջ,
Եւան ունէր սատանայի հետ վէճ,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Ի՞նչ պատճառ կար մկրտուեց Յորդանան,
Մուրհակ ունէր ²⁾ այնտեղ սատանան,
Քրիստոս ինքն աւրեց արաւ խափան,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Միշտ արդար է կամքի փառքը,
Կատարեց մարդարէի ասացքը,
Քաշելով այն խաչի շարչարանքը,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Ի՞նչ խորհուրդ ունէր աւագ ուրբաթին,
Տէրը խաչեցին լերան գողգոթին,
Արիւն թափեց Աղամի զագաթին, ³⁾

¹⁾, ²⁾ և ³⁾ աւանդութիւններ:

Կարդալով առնենք կրօնից կտակ:

Խչու հոգւով դնաց դժոխքը,
Կային մէջը մեղաւորք ու արդարքը,
Աւրեց դժոխք կ'վկայէ սուրբ գիրքը,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Եյսօթ Տէրն յերկինս համբարձաւ,
Ըրդարոց արքայութեան դուռը բացաւ
Մեղաւորաց դատաստան խոստացաւ,
Կարդալով առնենք կրօնից կտակ:

Մելիքսէթ ինչ ճիւղերդ կ'խօստէ,
Համիլք քեզնից մեղք մահու զգեստ է,
Մինչ ժամ է հոգիդ վազուց պատրաստ է,
(Դու) էլ կարդալով առ կրօնից կտակ:

ԵՇԽԱՐՀԻ ԸՆՅՁՔ Թի Ո՞վ ԵԿԵՒ ՈՒ ԳԵՐՑ ԿԵՄ ԻՆՉԵՐ ԵՎԵՆ
ՔԵԶՆՅԻՄ ԱՇԽԱՐՀ.

Ետեղ բքաբեր ձմեռն է, առջևդ է գարուն աշխարհ
Սկիզբդ է անուշ, վերջդ է դառն ու լեղի աշխարհ,
Եկող չի եղաւ վիճակը ուրախ, ինքդ (ես) քաղցած աշխարհ,
Երեկոյին ուրախ խնդում, առաւօտուն տխուր աշխարհ,
Մտածմունքով ցաւի հասցրիլ, տիրեց սրտիս վախ աշխարհ,
Որ մէկի նեղութիւնը շատ էր, դու արիք անգութ աշխարհ,
Հաւատարմութիւն չունիս, դու ինքդ ես շատ անխիղճ աշ-
խարհ:

Առաջ քեզնում գոյացան Աղամն ու Եւան ինչ եղան,
Տեսան քեզնից—դրախտից արտաքսեցիլ նոքա՝ ինչ եղան,
Դրախտից դուրս եկան դառն արտասուքով տես ինչ եղան,

Նրանք ծնունդ ունեցան պատկեր Տէրին՝ ինչ եղան,
Երկու արու զաւակ ունեցան՝ զիտես նորա ինչ եղան,
Եղբայրը եղբօր նախանձութեամբ սպանեց ինչ եղան,
Աղամ Յ ամ սուգ արեց ով էր միսիթարիշ աշխարհ:

Աղամից յետոյ մէկ միջոց, աշխարհ քեզնում ինչեր եղաւ,
Կրօնամոլութիւններ տիրեց բնակիչներդ փուչ եղաւ,
Անասունների պէս խառնուեցան քոյր օտար մէկ եղաւ,
Աստուծուն կամքը ճանաչող մէկ աղջիկ մէկ տղայ եղաւ,
Աստուծոյ կամքովն աղջիկը տղին կողակից եղաւ,
Աստուած բարկացաւ անձրև թափեց ծով ու ցամաք մէկ եղաւ,
Ջուրը փշացըեց չի մնաց գիւղեր կամ քաղաք աշխարհ:

Նոյր ինն հարիւր յիսուն տարի ապրեց վերջը ինչ եղաւ,
Յետոյ հայր Աբրահամը փորձառութիւն արաւ ինչ եղաւ,
Ճանաչեց Աստուծուն քառասուն օր քաղցած կեցաւ ինչ եղաւ,
Աստուած նրան հիւր եկաւ արու զաւակ տուեց ինչ եղաւ,
Տասն երկու որդիկանց հայր Յակովը նահապետ կար ինչ եղաւ,
Սով էր նա գնաց Եղիպտոս¹⁾ Փարաւոն տեսաւ ինչ եղաւ,
Ուրախ զալիս են տիսուր գնում, ինչ է քեզնում կայ աշխարհ:

Առաջ հայր Աբրահամ սով էր Եղիպտոս գնաց ինչ եղաւ,
Սառան քըոջ տեղ Փարաւոնին կին տուեց²⁾ ինչ եղաւ,
Երազում իմացաւ Սառային յետ զարձեց ինչ եղաւ,
Աբրահամին կառափարելու տեղ ընծայեց ինչ եղաւ,
Յօվաէփ Եղբօրցից վաճառմամբ այդտեղ եկաւ նա ինչ եղաւ,
Բանդի մէջ³⁾ Երազ թարգմանեց, բանդից ելաւ նա ինչ եղաւ,
Փարաւոնին օվնեց հաց ժողովեց քեզնում սով էր փուչ աշխարհ:

Իսրայէլի սերունդը Եղիպտոսում բազմացաւ ինչ եղաւ,
Փարաւոն այդ յեղի արու զաւակներն⁴⁾ ջնջեց ինչ եղաւ,
¹⁾ Փիրք ծննդոց դլ. 46 համար 6. ²⁾ Փիրք ծննդոց դլ. 12 համար 8.
³⁾ " " " 41 " 15. ⁴⁾ " Ելից " 1 " 22.

Մէկ հաստ Մովսէս մնաց արկղի մէջ ջուլը ձգած ինչ եղաւ.
Դուստր Փարաւոնի ջրից հանեց որդեկիր ¹⁾ ինչ եղաւ,
Մովսէս Փարաւոնի պալատում մեծացաւ ինչ եղաւ,
Օվնեց Հրէային, Փարաւոնի աշքից ընկաւ ինչ եղաւ,
Փախաւ՝ իւր կարճ կեանքը Փարաւոնից ազատելու աշխարհ։

Մովսէս Արաբիայում Յոթորի հովիւ դարձաւ ²⁾ ինչ եղաւ.
Եռաւ աղջիկը քառասուն տարի այդտեղ կեցաւ ինչ եղաւ,
Հովիւ էր՝ տեսաւ վառեալ մորենին վարհութից ինչ եղաւ,
Զայն ելաւ վառեալ թփից. «Ես եմքո հայրերի Աստուածը»,
Մովսէս անկաւ գեանի վրայ սկսեց երկրպագել ինչ եղաւ,
Աստուածոյ հրամանով դնաց եգիպտոս նա ինչ եղաւ,
Չունէր իր ճարտար լեզու, թարգմանիչ էր Ահարոն, աշխարհ։

Աստուած Մովսէսին Յ հրաշք (ցոյց) տուեց վերջը ինչ եղաւ,
Մովսէս հրաշքներ՝ գործեց իշխանք ծաղրեցին տես ինչ եղաւ
Աստուած նրանց վրայ գէշ աղջամուղջներ թափեց ինչ եղաւ,
Մովսէս ժողովից իւր ազգերը ծովի ափ գնաց ինչ եղաւ,
Աստուած հրամայեց, «Ճամպա է անցէք»-անցան ինչ եղաւ,
Փարաւոն եկաւ զօրքերով ծովի մէջ մտաւ ինչ եղաւ,
Ջրի մէջ փշացան տես ինչեր կայ քեզնում դու լոկ աշխարհ։

Ափսնս, արդար մարդարէի միտքը փոխուեց տես ինչ արաւ,
Բարի գործերը թողեց, հիմի էլ սկսեց չար արաւ,
Սպանել տուեց իւր ծառային կինն, կին արաւ,
Արլարադատ ստեղծողի բարկութիւնը վրան հասաւ,
Մահ անկաւ քաղաքների մէջ, տես ինչպիսի մարդիկներ
մեռաւ,
Դաւիթ մարդարէն ողբարով Սաղմոսերգութիւններ արաւ,
Ասաւ մեղքերս ներիր, պահպանիր քո ստեղծած աշխարհ։

1) Գիրք Ելից գլ. 2 համար 10.

2) Գիրք Ելից գլ. 2 համար 29.

Սովորոն արքայի պէս շկար աշխարհի մէջ ինչ եղաւ,
Մէկ կըքապաշտի աղջիկ բերեց իր սիրական արաւ,
Խելքը գլխից անկաւ, այնքան իմաստութիւնը ինչ եղաւ,
Թագաւորութիւնից զրկուեց. Աստուածընծայ թագը ինչ
եղաւ,

Տիսուր միտք սըտին տիրեց, յետոյ անցքը տիսուր ինչ եղաւ,
Մէկ մարդ իւր կեանքը մինչև ի վերջ շի անցկացընեց ուրախ,
Ո՛չ թագաւոր, ոչ իշխան, բոլորին մերկ ճամփող ես աշխարհ:

Հազար ութ հարիւր վաթսուն մէկ թուփն մօրից ծնուեցի,
Աշխարհի տեսակ-տեսակ անցքերը եռ հիմա գլացի,
Ուսումնականներից իմ սխալներս ներել խնդրեցի,
Զգալով աշխարհի անցքը, ողբալով տիսուր կեանքս լացի,
Արհեստովս անմաքուր ¹⁾ եմ ինքս ծնունդ Գաբրիէլեանցի,
Թաղավարդու հասարակութեան բուն Զարդանաշէնացի,
Խնդրեմք ընթերցողներին տան ողորմի հոգոյս աշխարհ:

Մէկ-մէկ ասել շեմ կարող թէ քանի կերպ քաղաքներ գնաց,
Քրտինքներով վաստակած մարգարիտ ու ոսկիներ գնաց,
Հրէշների պէս մենամարտող մեծ իշխան քաջեր գնաց,
Երեք հարիւր տասնութ հայրապետ, մարգարէ առաքեալք
գնաց,
Վարդապետներ, քահանաներ, արդար ճգնաւորներ գնաց
եղբօրը բարին կամեցող քանի ուռնայիներ գնաց,
Որը Մելիքսէժն եմ, ինքս զալայշի կուգամ քեզի աշխարհ:

ԶՈՒՑ ԲԵՐԵԿԵԾԱՐԱ ՈՒԽՏՐԵՎԵՂԻ.

Ճուշուայ գաւառի Զարդանաշէն գիւղի հարաւային կող-
մում 2) վերատ հեռաւորութեան վրայ գտնուում է մի ուխ-
տատեղի, որին անուանում են «Ճուխտ ²⁾» բարեածառ:

¹⁾ Անմաքուր՝ որովհետեւ ձեռքերս ու ոտներս միշտ ցեխուա է:

²⁾ Խուբ պատարագի ժամանակ ծառերը իրար ողջոյն են տուել:

Ճրջակաքը բոլորը անտառ է, ինքն էլ բարձր օբայի⁽¹⁾ վրայ, որի մասին պէտք է շարունակել: Այս վանքը թէպէտ ինքը մէկ է, բայց կայ ևս 2 եկեղեցի և մի առանձին փոքր խորան, որի արևելեան կողմում կայ մի փոքր պատուհան մոմ վառելու տեղ, և երեսում է հին ժամանակից վատած մոմի տեղերը: Պատուհանի աջակողմեան մասում կայ մի սրբատաշ քար, որի վրան գրուած է. «Աստ է ճպնաւորի ճըգնարան». իսկ այս բոլոր շինութիւնները աւերակ է և մէջն էլ ահազին ծառեր կան թաղուած: Ինչ որ վերաբերում է վանքին այս է որ սորանից շատ առաջ սովորութիւն էր, որ շրջակայ գիւղերը մատաղ էին տանում այս վանքատեղը տարին մի անդամ Համբարձման օրը ու մոքթում: Հին աւանդութեամբ լսածներս այս է որ «Զուլստ բարեածառ» է եղել անունը. շենք իմանում թէ այդտեղ որի նշխարն է ամփոփուած: Ներքին Թաղավարդ գիւղի բնակից Մուսայէլ Ղուլիեանցը անզաւակ լինելով, (ինքն էլ լաւ ապրուափ տէր) մտածում է նորոգել վանքը, իբրև վարձ իրա հոգու, գաղտնի գնում է մարդկանցից այդտեղ, վանքի միջի ծառերը կտրտում և քարերն էլ դուրս տալիս. և բացւում է մի շատ երեկի վանք ու մի տապանաքար բաւականին սպիտակ: Այդ քարը մանր տառերով գրած մէջ տեղում, իսկ 4 կողմը տեսակ-տեսակ ծաղկունքների ձևով նկարուած և գրածը այս է. «Մասունս սուբր Պօպոսի և սուբր Պետրոսի» ևս գրած է վանքը ինչ կայք է ունեցել, ինչ վարելանողեր, անտառներ, թէ ինչ կայտեր, վարդապետներ ևն բնակուել. ևս գրած է թէ այս ինչ թուլին ևս Գաղիկ իշխանաց իշխանի որդիս եկի Պարսկաստանից, այս վանքի պակասնորդն նորոգեցի: Այժմս հաշուելով գրեալ թուլից մինչև 1896 թ. համեստ է մօտ 1000 տարուայ: Դժբախտաբար այս տապանաքարի վրայ գրածները, բոլորը չի կարդացւում-որովհետեւ այս ահազին ծառերի արմատները

(1) Այսինքն սարի վրայ:

սեպմելով ճարդել է տապահաքարը հազիւ մանր կտորտանքը ժողովելով կարգացւում է ըիշ մասը։ Այս յիշողութիւնն որ յայտնուում է, էլ յիշեալ Կուլիեանցը կարողութիւնը չի համոււմ որ վանքը կառուցանէ իւր ձեռվ. այնպէս էլ մընում է։ Իսկ յիշեալ Կուլիեանցը բաց անելից սկսեալ մինչև այսօր, ամեն կիրակի ուխտաւոր կամ զոհ լինում է։ Այժմս սկսենք մի քանի տող ուտանաւոր շարունակելու։
1898 համբարձման օրը։

Ականջներս սրած սպասում եմ բարի սասի,
Զգալով եղելութիւնը եկամ էշինի հաւասի,
Եւանդութիւնն սուրբ վանքիս ջուխտ բարեսած առ կասի,
Դամբարան կայ գըեալ մասունս Պօղոս Պետրոսի։

Ո՞վ հրաշքդ տեսել է վախենալով կ'զարհուրի,
Զղալով մեղքերը սուրբ մասունքդ կ'համբուրի,
Հին ժամանակ քո կանթեղներդ կար մշտավառի,
Այժմ աւերեալ կաս ի ձեռամբն Լանգթամուրի։

Ո՞վ սուրբ վանք մէջդ էր քարով լիքը երեսդ փակ,
Պկային ուխտաւորներ չի գիտէին մէկ կտակ,
Մէկը բացաւ երեսդ որ ըեղնից առնէ փափագ,
Այժմ կարգարով տանբարանն կառնենք սուրբ կտակ։

Սուրբ զօրութիւնդ, ահագին լեռներն կանէ կէս,
Մէջդ շատ կան սուրբ մասունք, անունները պէս պէս,
Դոնովի մտնելոյն պէս աջ կողմն կայ սուրբ Յովսէփ,
Մտնելով խորանդ տանբարան կայ սուրբ Յովհաննէս։

Այստեղ միտքս բան ընկաւ, չի մեղադրէք եթէ հին աւանդութեան մէջ լսածս պատմեմ։ Մեր ծերերը կասեն որ մենք աւանդութեան մէջ լսած ենք, որ այս վանքի մէջ

պատարագի ողջոյնի ժամանակը, վանքի շրջակայ եղած ծառերը բոլորը իրար ողջոյն են տուել: Միշտ այս եղելութիւնը հրատարակուել է բոլոր գաւառները: Մէկ հեռու երկրից մէկ մարդ լսում է այս պատարագի ողջոյնի հրաշագործութիւնը, ինքն էլ այլ ազգ լինելով զարմանում է այդ եղելութեան վերայ: Այդ մարդը լինում է բաւականի հարստութեան տէր, վեր է առնում իրան հետ մէկ ջորի ոսկով բեռնած ու գալիս այս վանքը, և այդտեղ պատարագ մատուցանելիս, իսկ ողջոյնի ժամանակ ինքն դուքս է գալիս դուրս որ տեսնի թէ ծառերը իրար ողջոյն են տալիս թէ ոչ. կը տեսնէ որ ոչինչ չը կայ, սուտ կերեկ այս ողջման լուրը, իսկոյն մտնելով եկեղեցին կը դիմէ եպիսկոպոսին ասելով. «մենք այսպէս չենք լսած ինչու սուտ լուրը կը տարածէք ժողովուրդների մէջ»: Իսկոյն եպիսկոպոսը հարց է առնում բոլոր դպիրներից և սարկաւագներից, թէ ձեր որին սրտի մէջ է եղել որ և իցէ մէկ բան, որ մեր պատարագի կամ սուրբ վանքի գօրութիւնը մէկ հրաշագործութիւն չեն ցոյց տուել այս մարդուն: Բոլորը խոստովանուել են թէ ոչինչ չենք ունեցել մեր սրտըների մէջ. իսկ ժամարարը որ պատարագ է մատուցարել նա մեղայ է եկել թէ վայ ինձի, իմ սրտիս մէջ եղել է մէկ բան, ողջման ժամանակին ես մտադրել եմ թէ տեսնես այս մարդը ջորին էլ է ընծայել վանքին որ վանքին համար ջուր բերենք, թէ մենակ ոսկին է ընծայել: Այն ժամանակ յիշեալ պատարագ մատուցանողը բարձրացնով կանչել է, թէ ես ջորին էլ եմ ընծայել վանքին: Այս ասելուն պէս վանքի շրջակայ անտառի ծառերն բոլորը իրար ողջոյն են տուել: Այս հրաշագործութեան վերայ յիշեալ պատարագ մատուցանել տուողը մկրտուեց իւր բոլոր ընտանիքով և եղաւ քրիստոնեայ: Այս աւանդութիւնը մինչև այսօր պատմւում է:

Հրաշագործութիւն շատ ունիս, մեծ սարսափելի,
Զատ ուխտաւոր կուխտէ. տեսնել քեզի մեծ ցանկալի,
Սուրբ դանքարան կայ զբեալ հազար տարուց աւելի,
Զենած զոհի մսից զիւղ տանիլ է անկարելի:

Յժշկութիւն տվող ես, ամենն հիւանդին զիժին,
Տեղի բարձր է չի զիտեմ քանի հազար սաժէն,
Զոհի մորթին աւելցած միսն է թռչնոց բաժին,
Աղ օրհնող քահանաներ ձեր մօտը մի ոչինչ չի արժէն:

Այս սուրբ վանքի անտառներումը շատ կան խաչած քար,
Քարերն են մեզի համար սուրբ մասանց բարերար,
Ջրջակացը պլուզներ, ծաղկունքներով հաւասար,
Հայերուս համար այզի է դրախտի բարիբար:

Դուլիւանցը բացաւ երեսդ քեզի ճանաչեց,
Զդալով մեղքերը հաւատով Տէր Աստուծուն կանչեց,
Համրուբելով քարերդ քեզնից զաւակ պահանջեց,
Պարզեցիր զաւակ, նա ոչ ոքից չի ամաչեց:

Ընթերցող հայրք և եղբայրք զուք էլ տեսնել ուխտեցէք,
Ենզթէմուրի արարողութիւնը ողբով լացէք,
Սուրբ վանքիս կառուցանելոյ համար դուռ մի բացէք,
Ունէր սեփական հողեր սահմանը ըշխնեցէք:

Վանքիս մէջ եղել է երեսուն վարդապետ, երեսուն կոյս,
Եյժմս շատ կան մէջը ահազին ծառեր ինքնարոյս,
Տեսնող շատ եղել այստեղ երկնքից իշած լոյս,¹⁾
Երանի հոգոյն այն որ կուխտէ տեսնել ունի յոյս:

Հեղինակ հրաշալի գովասանք ես բարբառում

1) Վարդապետի կամ տօներին լոյս է երևոմ ասաղաձև:

Ասածովդ, տեղը ծառոտ է, ինքը անտառում
Դուցէ ցանկացող ուխտաւոր կայ, տեղը չի ճարում,
Ճեղինակը գրում է, որ է զուշուայ գաւառում:

Մելիքսէթ, դու մէկ կերպ դալայշութիւնով կառավարվի,
Աշխատիր որ գու ամէն փորձանքի մէջ մի ճարվի,
Տեսակ տեսակ փորձութիւններով մի խանդարվի,
Պօգննն քեզի սրբոց մասանց վերայ սիրահարվի:

Որ բարեխօս լինեն ամենայն քրիստոնէից,
Եւ հաւատացելոց յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԳԵՂԻՆԻ ԳԵՐ ԸՆԲԳԵՑ.

Զուշուայ Զարդանաշէն գիւղի հիւսիսային կողմում
երեք վերստ հեռաւորութեան վերայ, մէկ բարձր սարի
գագաթի վերայ կայ մէկ փոքր անապատ: Այս անապատի
բոլոր շրջակայքն է այգիսախառն անտառներ, թէպէտ վայ-
րենի անտառ է, բայց մէջերը շատ կան պտղատու ծառեր,
այսինքն տանձ, խնձոր, սալոր, ընկոյզ, շագանակ ևայլն:
Այս ծառերը, անտառները կամ վարելահողերը պատկանում
է այժմս Անոնդեաց անապատին այս սահմաններով. արե-
ւելեան կողմը զուշի Բաբայի հին ու նոր հանգստարաննը,
արևմտեան կողմը—Համբոյրատեղը, հարաւային կողմը զուշ-
ի Բաբայի գետը, իսկ հիւսիսային կողմը Փոյզունց աղ-
բիւրը: Այս յիշեալ սահմանների մէջը փողով գնած է Մե-
լիքներից: Գնողները երկու եղբայրք են, առաջինը Ղարա-
ղաչ, երկրորդը՝ զուշի Բաբայ: Բայց այժմս գնեալ հողերը
պատկանում է վանքին, այդքանը չի յայտնի թէ ինչ ձեռվ
է պատկանում, նուիրուած է թէ ծախտով է պատկանում
վանքին յայտնի չէ: Միմիայն ես հին կալուածագիրը տե-
սայ, յիշեալ երկու եղբօրց սերունդ, Աբրահամ քահանայ



Եպիսկոպոսեանցի ձեռին. լաւ այդքանը մեզ հոգ չէ բարակ իմանալոյ: Այժմս սկսենք իմանալ թէ այս վանքը ինչու է կոչւում Ղևոնդեաց անապատ, որովհետև շատ թէ քիչ լսած ենք, որ Ղևոնդեանք այս գաւառումը չեն նահատակուած, այլ ուրիշ գաւառում են եղել: Ճուշուայ գաւառում կայ մի քանի գիւղեր որին անուանում են «Մուսուըմանլար» կամ «Ենկի Մուս»: Այս Մուսուըմանլարը առաջ հայեր են եղել, և այս հայերից մէկ մարդ երկու որդի է ունեցել. առաջինը Ղարաղաշ, երկրորդը Բարա: Ինչ ժամանակ որ անիծեալ պարսկիները, գալիս են Հայաստան աւերելու, այն ժամանակ այս երկու եղբայրներին գերի են տանում Պարսկաստուն, քանի ժամանակ այդտեղ մնում են, հաւատները փոխած բայց երեսանց, իսկ ներքուստ քրիստոնեայ: Այդ դրութեան մէջ քանի տարիներ ապրում են: Մէկ օր պատահում են մէկ մօլլի և տեսնում են անօրէն մօլլայի ձեռքին հինգ հատ արծաթեայ խաչեր, թանգագին ակունքներով զարդարեալ ևս ամէն մէկի վերայ գըրած, թէ սա որի մասունքն է: Այս Ղարաղաշը շատ երկելի կարդացած է լինում. այդ մասունքների վերայ գըրածը կարդաց ու իմացաւ թէ որոնց սուրբ մասունքներն են: Խսկոյն հարցնում է թէ այս ո՞րտեղից է, Մօլլան ասում է որ ձեր Հայաստանի թալանման ժամանակն է ձեռս ընկել: Այս Ղարաղաշը քանի հարիւր ոսկի է խոստանում տալ մօլլային, որ սուրբ մասունքները ձեռիցը առնի, անօրէնը չի տալիս, յետոյ այս երկու եղբայրները մնում են մտատանջութեան մէջ թէ ո՞րպիսի կիրափիւ ազատեն այդ մասունքը և հասցնեն Հայաստան, յետոյ խորհուրդ են անում թէ կամ երկու եղբայրքս էլ փշանանք, կամ թէ մեր աղգային սուրբ մասունքները ազատենք և հասցնենք մեր հայրենիքը: Մէկ զիշեր իրանց ինչքան որ ոսկի կամ արծաթ են ունենում բոլորը վերցնում են իրանց հետ և երեւելի զէնքերով գնում մտնում այդ մօլլայի տունը, զիշե-

ըուան քուն եղած ժամանակը այդ մօլլային և այդ
տնումը ինչքան շունչ որ լինում է բոլորի գլուխները կըտ-
րում ու սուրբ խաչերը վերցնում փախչում, և թէ ինչ նե-
ղութիւններով հասցնում իրանց հայրենիքը: Դալիս են հաս-
նում իրանց գիւղը տեսնում որ բոլոր բնակիչները իրանց
սուրբ հաւատները ուրացել են դարձել մահմեղական, գիւ-
ղի անունն էլ կոչել են «Ենկի մուսուլմանլար» երբոր իրանց
ազգականներից էլ յոյսերնին կտրում է որ էլ քրիստոնէի
հաւատ չեն ընդունելու, իսկոյն այդտեղից հեռանում են:
Հեռանալու ժամանակը Ղարաղաշի եղբայր Բարան մէկ
թանգագին զուշ է գողանում, իւր հետ տանում: Մի քանի
օր անտառի մէջ մէկ կերպ կառավարում են յետոյ բարձ-
րանում «Բալայ Քիրսայ» գագաթը ու այնտեղից մտիկ
տամ դէպի հիւսիսային ներքի կողմը, հաւանում մի կտոր
հողի, որի չորս բոլորը ցած են, իսկ մէջտեղը բարձր սար
է, այս սարի բոլոր շրջակայքը անտառ է այժմս էլ միայն
սարի գագաթին մասնաւոր տեղ կան առանց վայրենի ծա-
ռերի: Յետոյ այդտեղից գալիս են այդ աչքի տակ եղած
հողերը Մելքներից գնում փողով լաւ օրինաւոր կալուա-
ծազրով: Երբ որ այս հողերը հաստատում են իրանց վե-
րայ վերջացնում, յետոյ Ղարաղաշը գնում է սուրբ Էջմիա-
ծին դիմում Վեհափառին՝ և յայտնում իրանց բոլոր անց-
քերը, թէ որպիսի կերպիւ ազատեցին մասունքները:

Այս եղելութիւնը որ լսում է Վեհափառը հարցնում
է Ղարաղաշին. «Ո՞րդի, այժմս ինչ է քո սրտի նպա-
տակը»: Ղարաղաշը պատասխանում է. «Թէ մենք Արցա-
խում սրբի յարմար հող ենք գնել Մելքներից. մեզ իրա-
ւունք տուր որ այնտեղ մի փոքր անապատ շինենք ու մեր
գերութիւնից ազատած մասունքները մէջը զնենք և վան-
քով կառավարուենք»: Վեհափառը իրաւունք է տալիս և
մի վարդապետ ուղարկում վանքի հիմքը օձելու. իսկ Ղա-
րաղաշին էլ վարդապետ ձեռնադրում ու գալիս են այս

գանգը կառուցանում այն ձեռվ՝ ինչպէս այժմ կայ 1227թ. ի լիշտակ Մօլլազարին (Ղարազաշին), որպէս մօլլի սպանող։ Ռւբեմն Ղարազաշը կառաւ կուսակրօն, իսկ իւր եղբայր Բաբան կարգուեց և այդ օրուանից սկսեց պարապել զուշի որսով, որի աղատնառով էլ կոչուեց «Ղուչչի Բարա»։ Բարուն ունենում է մի որդի Վարդան անունով որ ձեռնադրւում է քահանայ և ունենում մի որդի Եսայի անունով։ Վարդանի կինը վախճանւում է՝ և նա ձեռնադրւում է վարդապետ։ Ետային մնում է աշխարհի և ունենում է մի որդի Սիմէօն անունով։ Այս Սիմէօնը ելիք-Ճահնապարի իշխանութեան տակ լինելով, մի օր Մելիքը խնջոյք է պատրաստում և բոլոր մելիքներին ու թրբաց ազգից մի քանիսր հիւր կանչում։ Եյդ հիւրերը սենեակի մէջ նստած ժամանակ Մելիքը մէկ հատ մայրի հաւ է տալիս լիշեալ Սիմէօնին որ իւր քսելով խորովի, իրանց որտի ուզածին պէս։ Բուխարիկի կրակը շատ թունդ է լինում։ Մելիքը ասում է «Սիմօն շամփուրը դէպի զրազը դիր»։ Սիմէօնը զրադ է քաշում։ «Մելիքը էլի կրկնում է «Ճան տղայ չեմ ասում զրադ քաշիր»։ Սիմէօնը էլի է զրազ քաշում այնպէս որ բուխարիկի պատին կաշում է։ Մելիքը միևնոյն խօսքը երլորդ անզամ կրկնում է և հետո միասին Սիմէօնի պլիսին փայտով խփում։ Այդ միջոցին Սիմէօնը վերցնում է շամփուրը կրակի մէջ տնկում և ամանի միջի իւղը թափում վրան, իսկոյն կրակը վառւում է և Սիմէօնը ասելով քեզ հետ արդպէս պէտք է վարուել ու ինքը աշխատում վախչել Մելիքի ձեռքից բայց չի յաջողութեան մուլթ մուլտ ասելով։ «Մի սպաննիր մեր տոշե, թող մասյ մաղը»։ Գիշերը յաջողութեան է Սիմէօնին բաց ընկնելու և այդ մուլթ դիշերին կալիս է իւր երդիկից (պաջայ) կանչում իւր կնոջ ու ասում։ «Թէ Մելիքի զազարը (զայրոյթ)՝

հասել է ինձ վրայ, ևս փախչում իմ այդ շան ձեռքից որ կեանքս ազատեմ, դու եթէ կուզենաս ամուսնացիք, իսկ եթէ ոչ էլ ինձ շես տեսնելու, միայն իմ որդի Յովհաննէսը քեզ ամանաթ»։ մնաս բարն է ասում ու հետանում։ Այդտեղից զնում է հասնում կշմիածին, այդտեղ մնում է մի առ ժամանակ յետոյ ձեւնագրում վարդապետ։ Մի քանի ժամանակից յետոյ վերադառնում է իւր պապական անապատը, տեսնում որ իւր կինը ամուսնացել է ու գնացել «Կղաքծէ» գիւղը։ Սիմէօնից յետոյ քահանայ է ձեւնագրուում իւր որդի Յովհաննէսը «Հանագչի» գիւղի (Եւետարանոց) վրայ։ Այս քահանայի կինը վախճանուելով թողնում է մի որդի Աղէքսանդր անունով, իսկ Յովհաննէս քահանան ձեւնագրուեց եպիսկոպոս ու վիճ, առաջնորդ եպաւ Հաշտարխանում (Աստրահան)։ Աղէքսանդրը քահանայ ձեւնագրուեց իւր պապական անապատի վրայ։ Իսկ այս Աղէքսանդրը քահանային ունի այժմ երկու որդի էլի քահանայը ձեւնագրուած՝ մէկը անապատի վրայ Աբրահամ անունով, միւրը «Ղուշի Բաբայ» (այժմ Մոլիշ մ՛հատ) անունով գիւղի վրայ՝ որի անունն է Խահակ և գրում նն Յովհաննէս-Եպիսկոպոսեանց։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս մասունքները գերութիւնից ազատողների սերունդն է պահպանում վանքը մինչև այսօր։ Այսքան խօսակցութեան մէջ չի յայտնուից թէ որոնց մասունքներն են այս սուբբ խաշելը։

Առաջինը Յովհաննէս Մկրտիչ,

Գլխատուեց որ էր ճանապարհորդից առ մեծ ըլայ Ասելով ես մկրտեմ ձեզ զրով՝ Յովհաննէս մասունքների կամաց առաջնորդ կրօն հաստատեալ, զարդար Անօրէնի ձեռամբ նահատակեալ, իւր անձն սուբբ կրօն նուիրեալ։

Եղբորդը ինքը զինաւոր սուրբ Դէորդ,
Քարոզ տալու, իւր մէջ ունէք բորբոք,
Խօսելով թագաւորի դէմ անհոգ,
Տէր տանիլ սորա տանջանքը ոչ ոք:

2որբորդն էր մեծ սուրբ Ղևոնդ Երէց,
Այլազգաց դէմ խաչով պատերազմեց,
Նահատակուելով կրօն հաստատեց,
Իւր սուրբ արիւնը յիշատակ թողեց:

Հինգերորդը Բանդալիօն բժիշկ,
Ծնապատն է զուշիից մօտիկ,
Հայեր սրբոց տօնը պաշտպանեցէք,
Մի անէք կեղտոտ այլազգաց մտիկ:

Ես զալայշի եմ իմ անունս ցած,
Սրբոց մասանց վերայ սիրահարուած,
Մեռնեմ այն ազգասէր հոգիներուն,
Որ կ'ցանկան գիրքս տպազգուած:

ՄԵԾՆ ԻՆՉ ԸՐԵՒԵՍՈՒ, ՈՐ Է ԵՐՑԵՍՈՒ ԹԵՄՈՒՄ.

Ամարասու վանքը առաջ եղել է կաթուղիկոսանիստ,
բայց այժմս տարին մի անդամ՝ եպիսկոպոս էլ չի գտնուում.
այստեղ ազգային ուսումնարան բնաւին չկայ. սրա այգի-
ները առաջ ինն սպառդներ որ տալիս էին, այժմս 10 բաժ-
նից մէկն էլ չեն տալիս, այս էլ մեր դժբաղդ ուխտաւոր-
ների բախտիցն է. Ամեն ժամ Նստուծոյ դատողութիւնը
արդար է, գուցէ հարկը այսպէս է պահանջում. շատ ուխ-
տաւոր կարօտ է պատարագի երգեցողութեան ձայն լսե-
լու այստեղ՝ բայց... շաբաթ երեկոյեան «Լոյս զուարժ»-ի

կեսը հազիւ մեղքը նորա վիզը, մենք առանց ժամերգութեան էլ ենք մեր մոմերը վառում և խունկ ծխում ըստ աւանդութեան: 1897 թուի Սեպտեմբերին «Խաչվերաց» տօնին՝.... ընթերցող մեծ Տեարք, ներողամիտ եղէք և արժան համարեցէք քանի առդ ոտանաւորս շարունակեմ»

Այս է դամբարան սրբոյն Գրիգորիսի, Նահատակուած փոխանորդ Քրիստոսի, Նահատակեալ ի հոգումն Գերբենդի, Արժանացեալ ի հոգն Ամարասի:

Ինքն էր Ազուանից սուրբ Կաթուղիկոս,
Ութը տարուց աւել չի քաշեց ափսոս,
Նշխարդ բերին Ամարաս գու անխօս,
Քանի դար է չի յիշուած մեծ մարտիրոս:

Թոռն էիր Գրիգորի Լուսաւորչի,
Ութը տարուան քո աթոռ նստելդ յիշուի,
Մեծ սուրբ էիր դու յիշուելով Պարթևի,
Աջդ ման կածեն ժամանակն սովի:

Քո սուրբ արիւնդ որտեղ էր որ կաթեց,
Սարգաւագդ էլ թղթի մէջ փաթաթեց,
Վաշագան թագաւորը ¹⁾ տեղդ լսեց,
Քո սուրբ նշխարդ փնտրել սկսեց:

Մէկ բան չի պլծնիլ հաւատքով ինսանան,
Գիտէր քո վիճասվիլդ Սանէսանան,
Պարգև խոստացաւ ոյք որ (տեղդ) իմանան
Եմացրուց տեղդ Հիրհերու քահանան ²⁾:

Թագուհին սուրբ լոյս տեսնելով զարհուրեց, ³⁾

^{1), 2) և 3)} Ըստանդութիւններ:

Զերմեռանդ սրտով սուրբ մասունքիդ տիրեց,
Սրբի յարմար հոգեր ու գաշտեր ընտրեց,
Քեզի մարմարեայ տապանի մէջ զբեց:

Ամփոփողդ մեծ խելացի է եղել,
Այժմեան չայերս օգուտ հնք քաղել,
Երկու կողմերումդ կար չիշով գինի,
Որպէս զի նահատակութեան նշանի:

Խոկ սրտիդ վրայ զարդարեալ ոսկի խաչ,
Գաղաթիցդ մասունք չինեցին սուրբ աջ,
Ակունքով զարդարեալ կարմիր ու կանաչ,
Բժշկութիւն տուող հեշ¹⁾ չանինք ամաչ:

Այլազգիք կոշեցին քեզի «Աղօղլան»,
Առջևները կանգնած բէկեր ու մեծ խան,
Զօրքերով չայերից խել սկսան,
Եթէ շի բացուէր զինով խաչի նշան:

Երբ բացուեց հրաշալի²⁾ սուրբ դամբարանը,
Երևեց զինով սուրբ խաչի³⁾ նշանը²⁾,
Տէր ըլլալ հաշուել բազմաթիւ ինսանը³⁾,
Ամօթով յետ քաշուեց կրօնամոլ խանը:

Մելիքսէթ դու շարունակել ես զքել,
Մէկ բան լսելու ականջդ ես սրել,
Հունիս ուսում կ'խօսեն մեծ զիտնականներ,
Աղաչէ նոցա սխալներդ ներել:

¹⁾ Ամեննկին:

²⁾ Պարսիկները կամենում էին տիրել Ամարասայ, բայց սուրբ³⁾ Քր, զամբարանը փողելիս, երեցաւ շիշ զինք կողքերում զրած և խաչը սրտի վրայ որ նշան էր քրիստոնէութեան և պարսիկները յետ քաշուեցան (Ժող. աւանդութիւն):

³⁾ Մարդ:

Այս սուրբ ամենամաքուր դամբարանի վրայ դրածը
կարգացի որ զրած էր. «Թամբարան սրբոյն Դրիփորխի,
Նորանից կաթուղիկոսի, թռոն սրբայն Գրիգորի Լուսա-
տորչի Պարթևի, ծնեալ 322 թ. օծեալ 340 թ., և նահա-
տակին 348 թ. ի Սանէսան թագաւորչն Մագքթաց, ի
Վատնեան դաշտի մերձ ի Դերենդ, բերեալ յԱմարաս ըգ-
սուրբ նշխարս ի ձեռն ձեռնատուն սարդաւագաց նորին
Արցախուա, և բարեխօս ամենեցունց, ամէն:

Ընթերցողը ներեցէր, թէպէտ անյարմաք հաշուի այս
սրբոց վերաբերեալ զբութիւնների շաբքում զբել մի քանի
տող ոտանաւորներ, բայց ներեցէր, որովհետի ամեն մէկը
իրա արժանաւորութեան վրայ է հիմուած:

Հողը ինձ պէս օրը սկ անօգնական Հայի պլիքին, երբ
1899 թ. Յունիվարի 23-ին Բայախանի Սաբունչի կոչուած
թագում կամեցայ անօրէն թուրքի մօտ քիշ հաց ուտեկ՝
ասի որ ինձի համար 10 կոպէկի կերակուր բերէր, բերին
կամեցայ ուտեկ՝ տեսայ որ անալի է, քիշ աղ խնդրեցի ա-
սելով որ կերակուրը անալի է, այս ասելուն պէս վրաս
թափուեցին ծեծեցին ասելով. «Հարամզադայ դու քանի
պլսանի ես որ մեր կերակրին անալի կասեա»: Մէկը չկար
որ ինձ օգնէր, պատճառը որ ես հայ

ԱՆՈՒՆԱՎ. ՀԱՅ ԵՍ.

Ենունով հայ եմ ինքս տկար, լիպուս կարճ ինչ անեմ,
2են տալիս հայութեան ճաշակ նալի բազարջ ինչ անեմ,
Ըմպելու կարօտ եմ առանց դինիի, սուրճը ինչ անեմ,
չիւանդ եմ վտանգաւոր երկար կեանքի յոյս ինչ անեմ:

Զանազան ազգեր շատ կան ուտում են համով կերակուր,
իսկ Հայ ազգի կերակուրները նալիացնում են զուր,
կերակուր է, փողը ձեռին ազը կուլայ միշտ տխուր,

Են թողնում աղը կերակրի մէջ ձգել ինչ անեմ:

Թոշուն եմ ազնիւ անուանում են քամիաքուն ուրսուր,
Սոխակ էի ճարտարախօս, այժմս համբ ու տխուր,
Թոշոց մէջ կ'երգէի ճարտար, նոցա հեշ չէր գալ դիւր,
Ճղթայակապ բանդարկուած արդար աղաւնի ինչ անեմ:

Բոլոր թոշունների մէջ ամեն բանից զրկուած եմ,
Սոխակ եմ քաղցրախօս, ինքս վանդակի մէջ փակուած եմ,
Մի օգնական չունիմ որ համարձակ ձայնս տարածեմ,
Ցերեկուայ կոյր, գիշերուայ քայլ գիտուն բուն ինչ անեմ:

Սկսել եմ գիտունի պէս խօսել ինքս եմ անդէտ,
Հասակով երեսուն եօթ ամաց, անունս Մելիքսէթ,
Թէպէտ ուսում չունիմ, ունիմ ինձ ստացական արհեստ,
Ղալայշի եմ, անդործ շրջող, ցեխոտ չ'լաս ինչ անեմ:
ԱՅՍ ԱՃԽԱՐՀԻ ՄԷԶ ԻՆՉ ՆՄԸՆԸ.
Այս աշխարհի մէջ ինձ նմանը,
Նա մեռած լաւ է քան թէ կենդան,
Անամօթ կեղծաւոր անրանը,
Նա ¹⁾ մեռած լաւ է, քան թէ կենդան:

Կուգենամ ասել մէկ անկեղծ բան,
Կան աշխարհում մարդիկ զանազան,
Մէկը բարի, միւսը անպիտան. առաջ ոյման
Նա մեռած լաւ է քան թէ կենդան:

Ճատ կան մարդիկ ազգից բամբասող,
2ունինք իշխան երեսին թքող,
1) նա ասած բառը, նոքա կը հաշուի մինչեւ վերջ:

Անունով հայ իրանք չնացող,
Նա մեռած լաւ է քան թէ կենդան:

2են տալ կտոր հաց մէկ հայի փոխ,
2են սիրել հային ինչպէս մէկ տոխ,
Ատելով ազգին կանեն ոտնակոխ,
Նա մեռած լաւ է քան թէ կենդան:

Հատ կան ազգի մէջ կեղծ անշնորհք,
2ունին հայի արիւն ոչ բորբոք,
Ազգի համար է ամօժ և թոք,
Նա մեռած լաւ է քան թէ կենդան:

Ցաւով լի խօսեցար հեղինակ,
Վախով սիրտդ բացար հեղինակ,
2ի ընկնիս ձեռքերը բարու փոխանակ⁽¹⁾
Նա մեռած լաւ է քան թէ կենդան:

Մելիքսէթն ես ինքդ զալայշի,
Սիրէ միշտ հային մի ամաշի,
Ազգատեաց մարդուն մի ճանաշի,
Նա մեռած լաւ է քան թէ կենդան:

ԱՆՑԵՐՄԵՐ ՔԵՐՈԶ ՔԵՐՈԶՈՎԸ ՄԵՄԻԵՅՆ ՇՆԱԽՆՈՎ Է ՀՅՅ.
ԽՍԿ ԼՍՈՂՆԵՐՆ ԵԼ ԹՈՒԹՔԵՐ 2ԵՆ ԿԱՐԺԵՐ ՀԵՑԵՐ ԷԲՆ...

Այսօր այստեղ երկու վատ բան տեսայ, ⁽²⁾
Մէկն էլ մէկու նման շտեսայ,
Փողովուած էին լոկ բազում մարդիկ,
Մէջները մէկ հայ ինսան չ'տեսայ:

⁽¹⁾ Երկու զանկ աւել:

⁽²⁾ 2 զատ բանի մէկը պատարագն էր, միւսը մտաղը հացկերութեան հետ:

Ասածներից լսածու էր այսքան, առանձ
Մինչև ագզից բամբասել սկսան, առն ամ
Բանի տեղ չ'դնելով Հայաստան,
(Կասեր որ) մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսալ:

Քարոզում էր. «Գոհը ոշինչ բան է, ոչո՞ւմ
Պաս պահելը ոշինչ մէկ նշան է, ուն ամ
Կրօնամոլը մենակ Հայաստան է,
Մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսալ»:

Կեղծ, պարծանքով խօսում էր դեմքերասանը,
«Մի գործէք Տէրին ընդդէմ վաստանը,
Իւր գործքով քաղցած է Հայաստանը,
Մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսար»:

2ի յայտնում թէ ինչով է քաղցած .. .
Հան աշքից արտասուր զլորեց (նա ցած, ¹⁾
2եռին ունէք քարոզի գիրք բացած,
Կասէր, որ «մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսալ»:

Հեղինակն եմ պտուղի պէս չեմ թափուի,
Կտաւի պէս գեազովդ չեմ շափուի,
Ես քո կեղծ արտասուրովդ չեմ խափուի,
(Թէկուզ ասես) մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսալ:

«Խօսեց գերասանը բանը այդպէս չէ,
Զահը, մոմը, խունկը, խաչը, ոշինչ է, խօս
Կեղծ կրօնամոլութիւնը մէկ բան չէ, մը չէ
Մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսալ»:

«Այլպէս չէ պատուիրել մեզ մեր Տէրը,

1) Մի գանգ ամել

Որդին զոհուեց պէտք չէ մեր զոհերը,
Անմեղ տեղից պաշտում ենք խաչերը,
Մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսայ»:

«Թանգ զներով զնում էք պատկերը ¹⁾՝
Առջեր վառելով կերոնները,
Յիսուս զուր կ'հրամայէ բոլորը,
Մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսայ»:

Մէկ էլ դատաստան պէտք է զայ Տէրը,
Ենալէտք տեղը զենում էք զոհերը,
Թող Հայաստանին օդնեն սրբերը ²⁾՝
Մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսայ»:

Հեղինակը կտրել է իւր քոմք,
Թող արդար դատէ մոքով արթումը,
Հայի մոլորիշն է այս կեղծ շ . . . ը,
(Կատեր որ) մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսայ»:

Ղալայշի սարքած պահէ քո շլաղ ³⁾՝
Մշտական վաստակդ կը զայ կաթ-կաթ,
2ի խարուխ քարոզին ունիս հիւրմաթ ⁴⁾՝
Թող, ասէ մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսայ»:

Անունդ Մելիքսէթ դու հեղինակ,
Զգիր հայի թարաղը գանձանակ,
Հին աղքատ կնոջ հերին փոխսնակ,
Թող ասէ, մէջներդ մէկ հայ ինսան չ'տեսայ»:

¹⁾ Երաբդաթիթեն պատկերը:

²⁾ Յր մասագ էք մորթում սրբերումը, թող նոքա էլ ձեզ օդնեն:

³⁾ Պղինձ մաքրելու տեղը:

⁴⁾ Պատլէ:

ԿԱՆԱՅԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԽԱՆԴԵՐԻ ԵՆ.

Ես կուզէի տալ ողորմութիւն,
Կանայք խանգարիչ են ինչ անեմ,
Իմ սրտիս մէջ կայ շատ բարութիւն,
Կանայք խանգարիչ են ինչ անեմ:

Ինքդ կուզես տալ ողորմութիւն,
Իրանք կանեն անզգամութիւն,
Կայ իրանց սրտի մէջ ծռութիւն,
Կանայք խանգարիչ են ինչ անեմ:

Թէ որ տաս կտոր հաց աղքատի,
Կինդ կուզէ մազերը փետի,
Թո՞ղ արդար դատաւորն դատի,
Կանայք խանգարիչ են ինչ անեմ:

Ամեն մարդ կուզէ տալ տուրք համեղ,
Մելիքսէթ զու էլ տուր ուրիշ տեղ,
Հի լինիլ խանգարող կանանց ցեղ,
Տուրքդ լինի ընդունակ ուժեղ:

Աղքատն կասէ տուր Քըիստոսի սէրին,
Կանայք էլ ձեռք կ'մեկնեն խոշոր քարին,
Ես էլ զարհուրելով փառք կ'տամ Տէրին,
Կանայք էլ մեզ խանգարիչ են ինչ անեմ:

«Կասէ որ զանձեցէք զանձս յերկինս,
Ոչ գող մերձենայ, ոչ ցեց ապականէ
Կանայք մոլորին մեր բոլոր ինսանս,
Հեն թողնիլ որ մարդ արքայութիւն մտնի»:

Կանայք հէնց վազուց էին շատ լսայտառակ,
Այժմս ունին հրաշալի մէկ մեծ պարծանք,
Աստուածամայր եղաւ կանանց շատ մեծ փառք,
Կանայք միշտ մեզ յաղթիչ են ևս ինչ անեմ:

Մելիքսէթն եմ ոմանց կ'խանգարեմ,
Միթէ կանանց մասին հոգիս կ'սպանեմ,
Հաւատով մայր Աստուծոյ գովարանեմ,
Կանանց ցեղ մեղաց սրբիչ են ինչ անեմ:

ՈՂԲ ԹԱՌԱՄԵՍԼ ՃԸՆԿԻՍ ՎԵՐԵՅ.

Անուշահոտ ծաղիկս թառամեց,
Իր սիրոյ փշերով սիրտս խոցեց,
Արմատն չորացաւ ծաղիկն փակուեց,
Անուշահոտ ծաղիկս թառամեց:

2ի Կարողացայ առնել փափակս,
Ինքն չորս ամաց բացուած ծաղիկս,
2եռիցս թուաւ քաղցը որդեակս,
Անուշահոտ ծաղիկս թառամեց:

Դէմքով գեղեցիկ, լուսնեակի նման,
Լեզուն շատ քաղցը սոխակի նման,
2ի եղաւ խօսիլ հետս մի պայման,
Անուշահոտ ծաղիկս թառամեց:

Մեծ ցաւ է ծնողըին ծաղկից մեռածը,
Մի շաբաթ մոռցաւ ջուրը և հացը,
2ի դադարիլ ծնողների միշտ լացը
Անուշահոտ ծաղիկս թառամեց:

Դիօք դապսողը դիրկս առնելով
Հողուփարը տարի պէս-պէս ողբալով,
Պաղատու ծառի տակը թաղելով,
Անուշահոտ ծաղիկս թառամեց:

ԱնոԿարօտը քաշելով Յ տարի,
Անմար Տունը սև հողից ծածկոցը քարի,
ԱնմարԿանչեցի որդիակ, ճամալա քեզ բարի,
Անմար Յ Անուշահոտ ծաղիկս թառամեց:

Մելիքսէթն եմ տխուր կ'ողբամ,
Դստրիկս քաղցը, ինքն Մարիամ,
Որդիս յիշելով տխուր կ'ողբամ,
Անուշահոտ ծաղիկս թառամեց:

ԱՅԻ ԵԹ ՈՐԳԻՆ ՅՈՎՀԵՆԵԽԸ ԳՅԼՈՒՑԵՄԵՑԻՆ ԱՅ Է ՀՈԳԵԳԻՐ.

2ի տեսայ կարօտալի Փափագս,
Ուր ես քաղցրախօս սոխակ իմ բալայ,
Ո՞հ չի կատարուեց իմ նպատակս,
Ուր ես քաղցրախօս սոխակ իմ բալայ:

Հեռացել ես սէրս է միշտ հետդ,
Ուր տանեմ՝ ծաղկանման հագուստդ,
Պատանքդ էր հարսնինքի վթեթդ,
Ուր ես քաղցրախօս սոխակ իմ բալայ:

Առանց քեզի ոշինչ է այս տունը,
Վերադ վառեցի զառով կերոնը¹⁾՝,
Հարսնիք, կ'հաշուի խելօք դիտոնը,
Ճնորհաւորեմ հարսնիքդ բալայ:

1) Մոմլ:

Յանկացայ անումդ դնել մըռուաթ⁽¹⁾,
Գուցէ Աստուած պահպանէր սալամաթ,
Մեծ պասը պահէինք եօթը շաբաթ,
Ո՞հ անէինք կարմիր Զատիկ բալայ:

Աստուած չէր պարզիել ինձ մէկ զաւակ,
Քեզ ճարելով Աստուծուն կուտայի փառք,
Սիրելով հնատդ կանէի կատակ,
Այժմ ինչ սրտով առնեմ ճաշակ բալայ:

Ո՞հ սրտից չի տամ որ մտնեմ տուն,
Քեզ համար զիշեր, ցերեկ չունիմ քուն,
Որին կտամ քեզ համար նախշած ձուն,
Արի մէկ անդ անենք Զատիկ բալայ:

Թէսէտ դու չէիր իմ զաւակ բնիկ,
Քեզ բալայ կըկանչէի Վարսենիկ,
Պատասխան կտայիր լեզուդ քաղցրիկ,
Արի պագնեմ քաղցր լեզուդ բալայ:

Յովհաննէսն եմ ես տիսրալի կուլամ,
Հօրդ Զաքարիային միշտ սիրտ կտամ,
Մէրդ տալով ծնողքիդ կտամ ինամ,
Դու էլ արի ինձ տուր խնամ բալայ:

2ի բարկանաք եթէ կ'սիրէք ինձ,
Մելիքսէթն եմ ես տիսուր մտկալից,
Զարագրել եմ ինձի էլ կսկիծ,
Այս տիսուր ողբին ես էլ մասնակից:

(1) Անփոքձ:

ԻՆՉԵՐԵՑ ՆՈՒԷՐ ՊԵՐՈՆ ՅԱԲՈՒԹԻՒՆ ԽՈԶԿԱՑԵՑԻՆ.

Կ'հեռանամ ես քեզանից,
Մնաս բարե իմ սրտակից,
Այս իմ սիրական կողակից,
Մնաս բարե իմ սրտակից:

Բաժանւում ենք մեծ տանջանքով,
Մէկ զմէկուց կասկածանքով,
Վերադառնամ ողջ պարծանքով,
Մնաս բարե իմ սրտակից:

Օտարութեան մէջ տանջանքս,
Այս, կանցնի զուր իմ կեանքս,
Չգիտեմ ինչ է պարծանքս,
Մնաս բարե իմ սրտակից:

Անուշ հոտդ իբրե մէկ կինձ,
Ջուտ չի մոռանաս էլ դու ինձ,
Կ'ինդրեմ միշտ յիշեր ինձ,
Մնաս բարե իմ սրտակից:

Կեանքս մաշեց ձեր սիրոյ սուր,
Լալն աչքերս եղաւ կուր,
Երախեղքս էլ միշտ տիսուր,
Մնաս բարե իմ սրտակից:

Ինձ դիւր չի գալ օտար օդը,
Հեմ իմանում ձեր խորհուրդը,
Ինձ կ'մաշէ ձեր կարօտը,
Մնաս բարե իմ սրտակից:

Ա խ աննման իմ նազելի,
Մուշկու ամբար ես դովելի,
Միշտ կուլամ ես էլ խղճալի,
Մնաս բարե իմ սրտակից:

Խորհուրդ չի տաս մեր ներհակին,
Կուգեն աջուկ մեր պսակին,
Միշտ կ'սպասեմ ձեր նամակին,
Մնաս բարե իմ սրտակից:

Միշտ կը վառուեմ իրրե տաք բոց,
Իմ տեղս էլ ուրիշ ժամկոշ,
Տանս մէջը միշտ լաց ու կոծ,
Ոնաս բարե իմ սրտակից:

Յարութիւնն եմ ես տխրալից,
Բաժանմունքներս մնող կսկիծ,
Խնձ սպասիր իմ կողակից,
Մնաս բարե իմ սրտակից:

Միծ տանջանքով շաբաղեցի,
Ես ձեր մէջը սէր ձգեցի,
Մելիքսէթն եմ Ղարաբաղցի,
Ոնաք բարե իմ բարեկամք:

ԲԱԺԱՆՈՒԹՅԱ ԹԱՐՓՏԻՒՅ.

Կհեռանամ ես քեզանից,
Մնաս բարե խաղաղ Թոփտի,
Միամիտ չեմ ես իմ տնից,
Մնաս բարե խաղաղ Թոփտի:

Բարի տեսայ ես քո բանքդ,
Թուլով ութը հարիւր են տունքդ,
Թոն բաղմանան բնակիչքդ,
Մնաս բարև խաղաղ թոփտի:

Քո տիրութեամբ ես էլ լացի,
Փակուած վերքս մէջդ բացի,
Զգացմունքներ զիլք յօրինեցի,
Մաղթ յաջողուիլ խաղաղ թոփտի:

Ինձ յայտնի է վակդ, բացդ,
Անուշ կերայ ես քո հացդ,
Ուրախութեան փոխուի լացդ,
Մնաս բարև խաղաղ թոփտի:

Ինձ խոցեցիր սիրոյդ կամով,
Հացդ քաղցը, ջուլդ համով,
Միշտ շնու մնաս երկու ժամով ¹⁾՝,
Մնաս բարև խաղաղ թոփտի:

Խնդիրքս չէ կեղծ պարծանքով,
Կինդրեմ Տէրին կամքով,
Վարժատունդ լի մանկունքով,
Մնաս բարև խաղաղ թոփտի:

Նախագահներ հայր կոչեցի,
Աղանեցուն աղաչեցի,
Որ օպնեն ինձ կտոր հացի,
Մնաս բարև խաղաղ թոփտի:

Խոնարհութեամբ եմ համոզել,

1) Ժամ կը նշանակէ եկեղեցի:

Ողորմութիւն չեմ ժողովել,
Ել իմ քրտինքս եմ լիզել,
Մնաս բարե խաղաղ Թոփտի:
Քահանաներ օծեալ կարգով,
Ժողովուրդներդ մեծ փառքով,
Երիտասարդը բարի վալքով,
Մնաք բարե իմ բարեկամք,
Մնաս բարե խաղաղ Թոփտի:
Իմ սիրտս միշտ քեզ հետ զիւղէ,
Քեզնից բաժանուելլ չի ուղէ,
Հայրենիքս ինձի կուղէ,
Մնաս բարե խաղաղ Թոփտի:
Ես քո մէջդ անսփորձ կացի,
Երիբ տարի կեանք անցուցի,
Բաժանուերով տխուր լացի,
Մնաս բարե խաղաղ Թոփտի:
Տուր օրհնութիւն որ ճամպորտ եմ,
Օտար երկրից ես մէկ որբ եմ,
Մելիքսէթն եմ քեզնից զոհ եմ,
Մնաս բարե խաղաղ Թոփտի:

1898 թ. Ներքին Թաղավարդ էի և բանացնում էի իմ
զալայշութեան արհեստս. մի կիրակի առաւօտ ժամ էի
զնացել. ժամից յետոյ երբ որ եկեղեցուց դուրս եկանք
ժամի զբան կանգնած էին երկու Հայաստանցի աղքատ-
ներ, նայեցայ զբանց վրան, թէպէտ ձեռքիցս բան չեկաւ,
բայց սրտիս վրայ զբոշմուեց մի տխուր անցք այդ խեղ-
ճերու դէմքից: Եյս մտատանջութեան մէջ էի մէկ էլ տե-

սայ որ նոյն գիւղի բնակիչ Միքայէլ Առատամեան Ճահրմանեանցը հրավիրեց ինձ և տէր հմայեալ Նասալքրեանցին զնալու իրանց տունը, թէպէտ գնացի, բայց սրտիս մէջ տանջուում էի, ինչ արած որ միջոց չունէի բերան բանալ, վերջապէս այս մարդու տան թէյ խմեցինք, յետոյ բերին արագ (օղի) և թերախորով ձուաներ, մարդը մէկը այդ էլ վերջացնելուց յետոյ, քահանան սկսեց իւր հոգուոցը և պահպանիշը ասել, յետոյ առաջարկեց ինձ ասելով. «Ես քահանայ եմ և իմ պարտաւորութիւնս կատարեցի. զու էլ քո չնորհքով կարողանում ես մէկ բան խօսայ այս տան վրայ, ես էլ ամաչելով տէրտէրից կարճ խօսեցայ»: Այսպէս՝

Կան աշխարհիս մէջ մարդիկ զանազան,
Կեցցէ տունս այս անփորձ յաւիտեան,
Ումանք աշխատաւոր, ոմանք անբան,
Կեցցէ տունս այս անփորձ յաւիտեան:

Դիւր կը գայ աշխատասէրի համը,
Կ'համբերեմ սրտիս մէջ սիրոյ կամը,
Ոչինչ է ուտելով կեղծ բարեկամը,
Կեցցէ տունս այս անփորձ յաւիտեան:

Ոչինչ է արքենալ թանգ է սէրը, զի՞ն
Հառաշում եմ չկայ սիրոյ ընկերը,
Որ օգնէ վնտըրել հայ եղբայրները,
Կեցցէ տունս այս անփորձ յաւիտեան:

Այս է միշտ ազգի մէջ սարսափելին, ան ձեզուք
Հիւր կ'կանչեն քահանան ու պելին Յայր մասն
Զեն նայիլ փորը քաղցած աղքատին, զի՞ն
Կեցցէ տունս այս անփորձ յաւիտեան:

Քահանան է միշտ մեր մեղաց սրբիչ,
Որտեղ նստի, պարզեն է պահպանիչ,
Ղալայշի դիտմամբ ձեռդ առ գրիչ,
Կեցը տունս այս անփորձ յաւիտեան:

Երանի մարգոյն այն որ.... կ'տիրէ¹⁾),
Երեք դօշը անողանալի ցաւ է,
Միքայէլ դու էլ հայ խեղճին սիրէ,
(Որ) կեցը տունս այս անփորձ յաւիտեան:

Ասացէք տէր հայը ով է մեր արմատը,
Որ չի լսիր մեր ազաղակն ու դատը,
Կեանքս մաշեցին այն երկու աղքատը,
Կեցը տունս այս անփորձ յաւիտեան:

Զպացի ոտանաւորս յարմար,
Միտքն գիտեմ ես շարածիս բարբառ,
Մելիքսէթն եմ վախկոտ, զըշով տկար,
Կեցը տունս այս անփորձ յաւիտեան:

Ներքին Թաղավարդու ծխական քահանայ, որի անունըն էր սկզբից Բեկլար, կարգուեց 1877 թ. Սեպ. 18-ին, քահանայ ձեռնադրուեց 1878 թ. Հոկ. 23-ին և անուանեցին Հմայեակ: Օծեալ թուից մինչև 1898 թ. այս 20 տարուայ ընթացքում, ինչ կեանք որ վայելել էր իւր տիրունու հետ, բոլորից զբկուեցաւ կորցնելով իւր կինը, իւր աշքի լոյսը, կորցրեց իւր սրտի փափազը և ուրախութիւնը փոխուեց տրտմութեան: Ճարաթ Առաքելոց տօնին 1898 թ. նոյ. 28-ին, այս տեսակ ողբ կարդացի՝

¹⁾ Կարողութեան չափ:

ՕՐՅ ՈՒՐ ԿԴՆԱԾ.

Ուր կ'զնաս յարգելի տիրուհին,
Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին,
Ինձ էլ արթը ոմանց նման նմին,
Թէ կ'խղճաս, յետ պիտ դառնաս կրկին:

Ինձի պատշաճ չէ մէկ էլ կարգուել,
Ոմանց նման զարդարուել ու սարգուել,
Ահա կ'վազեն աշքիցս սէլ, (անձրեփ յորդ տեսակը)
Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Կեանք վայելամ քեղ հետ քանի տարի,
Մեռնիլդ լսողը կ'զարհուրի,
Շունիմ օգնական ինձ մթիթարի,
Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Մլպից իմ անոնս էր թեկլար
Այժմս հմայեակ եմ ինքս անճար,
Տասնամեայ Սաթենիկին չէ տան տար,
Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Տիրուհին էիր անոնդ Զառի,
Ճուշանը թող տունդ կտուավարի,
Արտաշն կուկայ մայրիկ չի ճարի,
Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Ճուշանն էլ որ ժամանակաւոր է,
Թէկուզ հաց, ջուր տալու էլ սովոր է,
Միթէ եօթը որբերուդ միշտ տէր է,
Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Ինչպէս դիմանամ երեխանց լացին,

Օտարութիւն գնալդ զգացին,

Ինձ հետ ողբերկութեան ձայն տարածին,

Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Յովհաննէսն շի գիտէ քեզնից լուր,

Նամակիս թող նայէ աշքերն սուր,

Որդի մայրդ մեռաւ մենք ենք տիսուր,

Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Համազասպն Եննէն փոքր քոյրդ,

Որը մնալով կորուցին ձեր մայրդ,

Յուսահատուած շինքը ծուռ հայրդ,

Կասէ մօրդ յետ պիտ դառնաս կրկին:

Լաւ տիրուհի էիր քո տան մասի,

Քո յետիէտ ոչ ոք շի բամբասի,

Ջուտ յետ դարձիր մանուկդ կ'սպասի:

Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Գործել ես գորգեր, տունդ է լիքը,

Քեզ հետ տանել չ'կարացիր մէկը,

Այսուհետ շուզեմ աշխարհիս փառքը,

Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Բաժանուեցանք Առաքելոց տօնին,

Մեզի վկայ պատարագիշը բեմին,

Կուլայ նորածինդ լաց ինձի կրկին,

Ասա ինձի յետ պիտ դառնաս կրկին:

Քահանայ եմ անունս Հմայեակ,

Կուլամ, կ'ողբամ իմ խորհուրդս փակ,

Ո՞վ է հօջն օրուայ մանկանդ զայեակ,
Ասա ինձի յետ պիտ զառնաս կրկին:

Մելիքսեթն եմ ես վանկ-վանկ շաբած եմ,
Ընդունիր, որ հացդ շատ կերած եմ,
Ինձանից նուէր ողբս տարածեմ,
Ասա մեղի յետ պիտ զառնաս կրկին:

1899 թ. Փետր. 27-ին օրն շաբաթ Բաքուայ մօտ
գտնւող Բալախանի էի. երևեց ինձ զանազան շարժումներ՝
իմ ականջներս լսեցին ուրախութեան ձայներ, որ երգում
էին թէ այսօր մեղ բարիկենդան է, ես էլ ուշքս ումիտքս
ձգել էի դրանց վրայ, մէկ էլ յանկարծ լսեցի ողբերկու-
թեան աղաղակներ, սարսափելի էր ինձ այդ ժամանակ, մի
սառսուռ ջերմ ու գող ընկաւ իմ սրտի մէջ, ելք յետ նա-
յեցայ՝ տեսայ մի խումբ երիտասարդներ, մի գեղեցիկ երի-
տասարդի—(որ դոյնը փոխուել էր մեռելի գոյնի), որի մի
թեր կտրած, արինաթաթախ, իւր երգօր ձեռին, միւս-
ներն էլ վիրաւորին շրջապատած ողբերկութեամբ տանում
էին հիւմնդանոց: Ես հարցը դրա պատճառը, ինձ պա-
տասխանեցին որ՝ «դա մարդ չէ, այլ Բալախանու բոլոր
վաստակը». այնքան աշխատաւոր էր: Խեղճի թեմ ընկել
էր մեքենայի տակը ու կտրուել, որ 2 կամ 3 տասից յետոյ
պէտք է ամուսնանար՝ որի նշանածը արդէն սպասում էր
նրան: Ես էլ անգործ էի, առաւօտը վեր էի կացել տխուր,
ինքս ինձի ողբերկութեամբ լացել, միանից նույնուն՝ զրե-
լով 6 տուն ոտանաւոր՝ վերջում կոչելով. «Մեղայ քեզ
Աստուած»:

Առաւօտ տիրուած եմ վեր կացել,
Պատճառն ինչ է մեղայ քեզ Աստուած,
Ինքս ինձի ողբերկութեամբ լացել,
Բայց..... պատճառը ինչ է մեղայ քեզ Աստուած:

Անացին այսօր է բարիկենդան,
Ումանք մեծ ուրախանալ սկսան,
Ումանք էլ մեծ տիրութեան մէջ ընկան,
Բայց..... պատճառն ինչ է մեղայ քեզ Աստուած :

Անթիւ մարդ կայ քեզնում Բալախանի,
Որը անգործ, որը թեր կտրած,
Քամբախտին¹⁾ բարիկենդանն ինչ անի,
Բայց..... պատճառն ինչ է մեղայ քեզ Աստուած :

Որոնց ընտանիքներն են քաղցած,
Իրանք էլ այսուեղ անգործ մնացած,
Ընկերը ուրախ, ինքը չի ուտիլ հաց,
Թէ պատճառը ինչ է..... մեղայ քեզ Աստուած :

Եղած վաստակներս տանք խորակի²⁾ ,
Այսօր շաբաթ է վաղը կիրտկի,
Որն էլ երեխանց կ'փափագի,
Թէ պատճառը ինչ է..... մեղայ քեզ Աստուած :

Մելիքսէթ զու էլ լեռ ընկերակից,
Տխուը անօպնականների շաբաթում,
Զրկուած ես լնտանիքից—վաստակից,
Թէ պատճառը ինչ է..... մեղայ քեզ Աստուած :

ԱՐԴԻՆ ՀԵՐՑՆԱԽՄ Է ՄԾՌԵՅ ԱՌ Է ՀԵՐԹ .

Ասէ որդին՝ Մայրիկ ջան բա՛ ուտեղ է իմ հայրս,
Ցուցուը ես ինքս ուզում եմ նրան,
Չի արժել այսպէս փափագ մնախ,
Հիմի սաստիկ փնտրում եմ ես նրան:

¹⁾ ԳԺԱԽԱՏ :

²⁾ ԿԵՐԱԿՈՒՐ :

Ապէ մայրն՝ Որդի նա ինքն արհեստառը էր,
Օտարութիւն գնաց էլ չի եկաւ,
Նա միշտ գնալ ու գալը սովոր էր,
Օտարութիւն գնաց էլ չի եկաւ:

Որդին՝ Ինչու այդպէս տան վրայ չունէր սէր,
Ասա ինքն էր ինչ արհեստի տէր,
Մեզի թողեց անօպնական անտէր,
Իմացրու ևս ուզում եմ նրան:

Մայրը՝ Մի գնար որդի, մի քիչ սպասիր,
Նա ինքն էր արհեստով որմնադիր,
Ճրջերով գուցէ նրան չի գտիր,
Օտարութիւն գնաց էլ չի եկաւ:

Որդին՝ Ինձ ստիպում է ծնողաց սէրը,
Բա չես ճանաշում նրա ընկերը,
Հարց կառնեմ բոլոր որմնադիրները,
Թոյլ տուր գնամ, ուզում եմ ևս նրան:

Մայրը՝ Որդի զու մի բաժանուիլ մեզանից,
Նա ինքն զրկուել է այս աշխարհից,
Ինքդ մխիթարուիր Աստուածանից,
Օտարութիւն գնաց էլ չի եկաւ:

Որդին՝ Մայրիկ չի գիտեմ ինչ է ասածդ,
Որտեղից լսեցիր այդ կասկածդ,
Ճիշտ խոստովանուիր զու այդ լսածդ,
Թոյլ տուր գնամ, ուզում եմ ևս նրան:

Մայրը՝ Արևիդ մատաղ քո մայր նախունը,
Դու ևս մնացել նրա ինդումը,

Հայրդ միոել է Բաքուայ հողումը,
Օտարութիւն գնաց էլ չի եկաւ:

Որդին՝ Աւագն եմ իմ հօր յիշատակը,
Պիտի գտնեմ ամփոփուած դիակը,
Քար քցեմ, վրան զբած իւր կտակը,
Թոյլ տուք գնամ, ուզում եմ ես նրան:

Միթէ սրանից աւել դառն կտիթ կայ ոչ,
Բաքում մեռնող շատերի արիւնը կայ ոչ,
Մելիքսէթ դու էլ օտար տեղ կը մեռնիս,
Որդիկ վնատքելով բեզի եա գտնէ, եա ոչ:

Եղբայր զարթիր վեր կաց գործիդ գնայ,
Մտքով քունը ի զուք կ'մահանայ,
Որ մեկն էլ զառը քնով վէրը կ'ատանայ,
Հայ ես զարթիր վեր կաց գործիդ գնայ:

Յյդպէս պինդ քնել ես դառն մաքով,
Ինչու ախ ես քաշում ծանը վէրքով,
Դու միշտ շարունակիր տէրին կամքով,
Խեղճ ես զարթիր, վեր կաց գործիդ գնայ:

Դու կիսակատար մի լժողիլ բանդ,
Մօտղ նկատող կայ վոխուած գոյնդ,
Կ'բամբասեն անմիաբան խումբդ,
Հայ ես զարթիր վեր կաց գործիդ գնայ:

Այդպէսը եղել է քանի քանիսը,
Ճուրը որ մէկ տեզով անցած լինի,
Ցոյս կայ այնտեղով մէկ էլ անցնի,
Որբ ես զարթիր, վեր կաց գործիդ գնայ:

ԱՇԽ քաշելով արտասուզ մի թափիլ,
Դու պատահմամբ վորձով մի սարսափիլ,
Քանի դար պէտք է քաշի տանջանքը,
Ցոյս Տէրին գարթիր վեր կաց գործիդ գնայ:

ՄԵԼԻԲՍԵԺ դէմդ շատերն ունին վէճ,
Հ'գիտես ինչ կայ հօրեղբօրցդ սըտի մէջ,
Պինդ քուն ես, աշխատիր զու էլ զարթիր,
Կիսակատար գործերդ շարունակիր:

ԳԵՐԲԵՆԳՈՅԻ Ը.Ա.Բ.Զ. ԾԱՎԻ ԵՓԻՆ. 18 $\frac{6}{14}$ 99 ԵՄԻ

Ծովակ զու աշքիս լաւ չես երևում,
Գուցէ Հայիս կլանել ես ուզում,
Թշնամի չեմ, լուացուել եմ ուզում,
Ինչու որրիս կլանել ես ուզում:

ԱԼԻԲՆԵՐԴ բարձրանում են սաստիկ,
Ծուտ կ'քաշեն ներս, թէ լինեմ մօտիկ,
Չես անել Հայիս աղաչանիրին մտիկ,
ԱՇԽ անճարիս կլանել ես ուզում:

Քանի որ ես դալիս եմ քո ափը,
Գոռալով վրաս ես զցում սարսափը,
Չես յիշում Հայերուս նախկին վէպը,
ԱՇԽ անտէրիս կլանել ես ուզում:

Զօրեղը տկարի վրան չի գնալ,
Միթէ ջրերդ գութ չեն ունենալ,
Լողալ գիտէի չէի վախենալ,
Կ'փոխուի դարը, այսպէս չի մնալ:

Կաղաշեմ ինձի հետ էլ արա դու սէր,
ինչպէս սիրում ես զանազան աղքեր,
Հայն էլ ունէր վրադ շոգենաւեր,
Հիմի շի ունեն տեղերն է աւեր:

Ծովակ լինչ վատութիւն տեսար Հայից,
Քանի Հայ խեղտեցար առաջ ասկից ¹⁾՝,
Եհա ողբում եմ, շունիմ ողբակից,
Մխիթարելու տեղ, խեղտել ես ուզում:

Ծովակ Հայերէն խօսիր հասկանամ.
Ուզում եմ հետդ բարեկամանամ:
Գուցէ այնակէս լուր տաս ուրախանամ,
Սպասիր մի կլանիր անխնամ:

Գիտես որ իմ սրտիս մէջ կայ կսկիծ,
Ալիքներդ ինձ հետ եղան ողբակից,
Ծովակ երբ պէտք է փոխուի դարը,
Որ ուրախանայ մեզ պէս անճարը:

Մելիքսէթն եմ ծովակիդ սիրահար,
Սպասեցի պատասխան շի տուար,
Հայ եմ յոյս կտրուած ես անճար,
Էլի ինձի կլանել ես ուզում:

Ծովը գոռաց..... ալիքներս պսակ է,
Ջատ մարդ գլխին դնել կ'փափադէ,
.... համար համբերելը կեանք է,
Զեմ կլանել մի վախենալ ինձնից:

Էլ չեմ շրջիլ ես ինքս քարեքար,

1) Սբանից

Դու որ ինձ համբերելու խրատ տուար,
Հանգստացիր տեղդ դու բարի խաղաղ,
(Ես) գնամ մնաս բարե ծովակ եղբայր.....

ՃԱՆՑՊԵՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՖԱՎԻ ՎՐԵՅ 18⁶₂₁/99 ԵՄԻ.

Ճողենաւում վերադ նստամ ծովակ,
2եմ իմանում լամ թէ խնդամ ծովակ,
Հայ եմ ինձի շունիմ մի օքնական,
Խօսիր դու իմ հետս օտար ծովակ:

Մօտս շատ կան տեսակ-տեսակ մարդիկ,
Ուշքս գնաց մէկը չի արաւ մտիկ,
Երանի էր մէկը լինէր տաճիկ,
Թռուած զոյնով վերադ ողբամ ծովակ:

Ասին՝ նարօհօդ նաշնալ եակա,
Ասին՝ ինձի ջուր տուէք մի լոյնա,
Այստեղ Հայ չի կայ ինձանից բաշկայ ¹⁾,
Բացադրիր այս փակ խօսքը ծովակ:

Ինձի ասել շուգէին էրմանին ²⁾,
Ես լեզու չ'գիտէի բնաւին,
Ինքները կասէին ու լսէին,
Ես ինքս տխուր ու մունչ լալ ծովակ:

Ալիքներդ վայ-վուշ, ջուրդ կապոյտ,
Ինձ ասին. «Կուդա ոյդենի» ասի տուտ,
Կարծեմ ասածիս մէջ կար փակ խորհուրդ,
Սիրտ ու անունս սև անտակ ծովակ:

¹⁾ Բացի:

²⁾ Հայ:

Ծովակ ես և զուն ողբամք որբի գլխուն,
Մենք ողբում ենք արթուն որբն է միշտ քուն,
Արի կողքին խժենք, որ լինի զարթուն,
Դուցէ ինքը իւր համար ողբայ ծովակ:

Իննըսուն իննը թիւ ես Դերբենդից,
Եղբայրս նամակ ստացաւ տնից,
Պատուելով թագցընց ինձանից,
Չ'զիտիմ ինչ կար մէջը տխուք ծովակ:

Ամսոյս 21-ին ճամպայ ընկամ,
Ուզում եմ ես որ հայերէն ողբամ,
Ընկերքս բոլորն են անխնամ
Դու եղիք ինձ հետ ողբակից ծովակ:

